

2389

6/11

ՅԱՅՏՏԱԳԻՐ

Կալքեան Գործակալութեան

ԵԿ

ԳՐԱՑՈՒՑՈՒԿ



174.

ԳՐԱՍԵՆԵԱԿ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Թիւ 16, Պազարի խան

ՊՈ.ՀԱՀ Գ.Ա.ՓՈՒ, հ. ԳՈՒ.Հ.Օ

13803

ԴԱԿԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

13803

ՅԱՅՏՎԱԳԻՐ

ԵՒ

ԳՐԱՑՈՒՑԱԿ



ԳՐԱՄԵՆԵԱԿ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Թիւ 16, Գազասիեր խան

ՊԱՀԱՀԵ ԳԱԲՈՒ, և ՊՈՒՅԱ



ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՎՈՒԹԻՒՆԸ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1892 ԻՆ

ԿԸ ԶԲԱԴԻ ՄԱՍՆԱՌԱՊԵՍ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ.

Ա. Կը յօրինէ եւ կը հրատարակէ դասագրեր ազգային վարժարաններու համար :

Բ. Կը հրատարակէ նաև ուրիշ նեղինակներու պատրաստ օգտակար գրերը :

Գ. Կը կատարէ ամէն տեսակ տպագրական եւ յարակից գործեր :

Դ. Կը հայրայք վարժարանաց համար պէտք եղած դասագրերն ու դպրոցական պիտոյքը :

Ե. Պոլսոյ եւ Գալառաց դպրոցներուն համար դպրոցական պատօնեաններ կը դրկէ :

Զ. Իբրեւ յանձնակատար, կը ստանձնէ՝ կրթական, առեւտրական, անհատական, դատական եւ պատօնական գործեր :

Է. Կը կատարէ յանձնարարութիւններ՝ արտածելի եւ ներածելի ամէն տեսակ ապրանքներու վրայ :

Ի՞ր ՈԿՉՅԱԼԻՆՔՆ է

Այլոց օգտին մէջ փանուել իր շահը :

Ի՞ր առաջին եւ զիխաւոր պայմանն է
ԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԵԼ :



Կանոնաւորութիւն, ճշդութիւն եւ արագութիւն
հրաժարաւեալ :

Ա.

Դասագրեր

Դործակալութեան Հիմնադիր Տնօրէնը 1880 էն մինչև 1891, Պոլսոյ եւ Գալառաց մէջ վարած ըլլալով Ուսուցչական եւ Տեսչական պաշտօններ, եւ անձամբ զգացած ըլլալով կրթական արդի պահանջմանց համաձայն դասագրքեր յօրինելու պէտքը՝ ձեռնարկած է կրցածին շափ աշխատիւ այս ողջութեամբ, եւ 1887 ին առաջին անգամ ըլլալով՝ պէտու տաճկախօս հայոց հրատարակած է Հայ Լեզուի Դասընթացքը որ կը բազկանայ երեք մասերէ կամ շրջաններէ։ Սպա, փորձառութեան վրայ հիմնուելով շարունակած է իր ջանքերը նոյն նպատակով, եւ այսոք տասնէ աւելի դասական գրքեր հրատարակած է, որոնք են.

ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ

Հինգերորդ Տպագրութիւն, 1895, էջ 112, մեծադիր

Առաջին գլուք Տաճկախօս տղոց. պարզ եւ դիւրին կերպով կ'աւանդէ բառեր, որոնցմով մանուկը կը վարժուի կազմել խօսքեր։ Փոխադարձ թարգմանութիւններով, բառերու վրայ այլ այլ նախնական կրթութիւններով, մտամարզական եւ իրագիտական հրահանգներով, մանկական ուսանաւորով՝ առանց ճանճրանալու՝ նոյն իսկ գուարդալի եղանակով մանուկ աշակերտը կ'ուսանի ընթերցանութիւն, թարգմանութիւն, տարրական գիտելիք լեզուի։ — բայց զարմանալին այն է որ քանի մը ամսուան մէջ տղեկը կը սկսի ինքնին Հայերէն խօսելու։ Այս է արդէն գրքուկին նպատակը։ Զեռք բերուած արդիւնքը իրական եւ վաւերական է, Պատ. Ուսուցիչներու վկայութեամբ եւ միմակագրական տեսլեկութիւններով։

Գին 3 դահ.

ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՅ

ԵՐՐՈՐԴ ՏՎԱԳՐՈՒԹԻՒՆ, 1894, հջ, 208, մեծադիր

Այս Բ. մասին մէջ է որ կը փայլին մեթոտին առաւելութիւնները. տղոց մագին համապատասխան նիւթերով ընթերացանութեան կը վարժեցնէ, միանդամայն իրադիտութեան, մասմարզութեան եւ այլ կարեւոր գիտելիքներու, բարոյական սկզբունքներու կ'ընտելացնէ. լեզուն հետ կը կրթէ հաեւ միոքը եւ սիրոք: — Ամէն էջի ներքեւ կը գտնէք հրահանգաներ որոնց մէջ է մեթոտին գաղոնիքը: Հաստատ գիտցէք որ, եթէ այդ հրահանգները պէտք եղած ինաւով կատարել տաֆ, Տաճկախօս մանուկը անպատճառ ՀիմնաՊէտ սորված պիտի ըլլայ Հայերէն կարդալ, հասկնալ, խօսիլ եւ նոյն իսկ շարադրել: Գին 5 դահ.

ԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՅ

ԵՐՐՈՐԴ ՏՎԱԳՐՈՒԹԻՒՆ, 1896, հջ 208 մեծադիր

Այս երրորդ մասը՝ իրեւ ընթերցանութեան գիրք, անըաղդատելի առաւելութիւններ կ'ընծայէ: Եւ նախ, կարեւոր է գիտնալ թէ ԵՐՐՈՐԴ Վարժութիւնն ընդունուած եւ մեծապէս օգտակար եղած է որչափ տաճկախօս՝ նոյնշափ ալ հայախօս գաւառներու եւ Պալոյ լսաւագոյն դարոցներուն մէջ: Կը սրարունակէ՝ բարյագիտական, իրադիտական, մտամարդական եւ այլ պիտանի նիւթեր՝ ընթերցանութեան համար: Պարզ Ընթերցարան մը չէ այս գիրքը, եւ աշակերտը զայն չպատի կարդայ մեքենական կերպով, հապա՝ հմտալից նիւթերուն իմաստին պիտի թափանցէ, եւ գիտակցարար պիտի առաջդիմէ, ստանալով մտքի եւ սրտի մշակութիւն, իմացական կարողութեանց զարգացում եւ բազմակողմանի հմտութիւն գործնական եւ կարեւոր գիտելիքներու վրայ. Քերականութիւն, Մտամարզութիւն, իրադիտութիւն, Քաղաքային

Գիտութիւն, եւայլն, եւայլն: Պիտի կատարէ մտաւոր, գրաւոր եւ բերանացի մարդանքներ՝ լեզուի եւ մտածութեան, հոմանիշներու, հականիշներու, նմանաձայններու վրայ, վերըւծութիւն իմաստի, ոճի, եւայլն:

Գին 5 դահ.

ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա.ՇԽԱ.Բ.ՀԱ.Բ.Ա.Ր ԼԵԶՈՒԻ

Գ. ՏՎԱԳՐՈՒԹԻՒՆ 1894, հջ 48 մեծադիր

Նախնական կարգերու գիրին եւ գործնական եղանակով կ'աւանդէ Հայ լեզուին հիմնական օրէնքները եւ կը կառնոնաւորէ աշակերտին լեզուն:

Մասնաւոր առաւելութիւններով օժտուած այս գրքոյէ մեծագոյն քաջալիքութեան եւ հմուտ մասնագէտներու գնահատման արժանացած եւ սուղ ժամանակի մէջ տանեակ հագարներով սպառած է:

Գին 2 դահ.

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ա.ՇԽԱ.Բ.ՀԱ.Բ.Ա.Ր ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ա. ՏՎԱԳՐՈՒԹԻՒՆ 1894, կրկնակ հջ 114

Պէտք է կարդալ այս գրքին Յառաջաբանը ուր մանրամասն բացատրուած է՝ Քերականութեան արուեստին նպատակը, մասնաւորապէս այս գրքին առաւելութիւնները եւ դասաւանդման եղանակը՝ որ շատ հրահանգիչ է: Ի՞նչ պէտք կայ աշակերտին գոյց սորվեցնել քերականական կանոններ. հատուածներով եւ գործնական կրթութիւններով կրնանք լեզուին օրէնքներն ու սկզբունքները ուսուցանել. այս է ահա

Լրացուցչին մէջ գործադրուած մէթուոր։ Կը պարունակէ վերածանելի հատուածներ եւ անոնց անմիջապէս յաջորդող շահեկան եւ բազմազան հրահանդներու ճոխ մժերք մը.

Գին 3 դան.

Փ Ն Զ Ա Կ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՒ ԽՈՇՈՐՍԳԻԲ

Բ. Տպագրութիւն 1895, հջ 48

Արձակ եւ ոտանաւոր փոքրիկ հատուածներու վրայ մանուկները կը վարժին ընթերցանութեան եւ արտասանութեան նիւթերն են շատ պարզ եւ փոքրիկ տղոց ընտանի. Ընդունացնալիք։

Գին 1 1/4 դան.

Փ Ո Ւ Ն Զ

ՀԱԻՍ.ՔԱԾՈՅ ԱՇԽԱՐՀԱԲՈՐ ԼԵԶՈՒԻ

Գ. Տպագրութիւն 1895, հջ 96

Չուտ ազգային առակներ, երգեր, մանրավիզներ, բարյական եւ գիտական հատուածներ, եւսցըն։ Ամէն նիւթի անմիջապէս կը յաջորդէ բարյական առած մը որ կ'ամփոփէ նիւթին իմաստը։ Հոգ տարուած է որ հատուածները՝ թէ իմաստի եւ թէ լեզուի կողմանէ յարմար ըլլան տղոց ըմբռնումին։

Գին 3 դան.

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Փ Ո Ւ Ն Զ

ԾԱՂԿԱ.ՔԱՂ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ, Ա.ՐԶԱԿ ԵՒ ՈՏԱՆԱԽՈՐ

Ա. Տպագրութիւն 1894, հջ 240

Նախակրթարանի Դ. եւ Ե. դասարանաց համար պատրաստուած այս դասագիրքը կը պարունակէ ազգային գրիչ-

ներէ, ինչպէս եւ օտար հեղինակներէ — մեծ մասամբ նոր եւ անտիպ — հատընտիր հատուածներ։

Նիւթերու խնամեալ ընտրութիւնը կը միտի մարզել դպրոցական սերունդին միտք՝ օգտաշատ ծանօթութեանց մէջ, սիրտը՝ բարյական սկզբունքներու եւ ազնիւ զգացումներու մէջ, ճաշակը՝ գրական լեզուի մէջ։

Հոգ տարուած է որ նիւթերն ըլլան յարմար՝ 10—13 տարեկան տղոց հասողութեան։

Գրին մասնաւոր առաւելութիւնները. Անձնիւր հատուածունի ստորեւ՝ բացատրելի բառեր, պիտանի գիտելիք, վարժութիւններ եւ հարցումներ՝ լեզուի, իմաստի, ոճի, քերականութեան, համաձայնութեան, շարադասութեան, բառակազմութեան, Հոմանիշ, Հականիշ, Նմանաձայն բառերու վրայ, եւ որ ի կարգին։ Ասոնք դասատուին կատարելիք աշխատութեան նախագիծներն ու դասաւանդման ընդհանուր ուղղութիւնը ցոյց կուտան, եւ տարակոյս չի կայ թէ մեծապէս պիտի նպաստեն աշակերտներուն մտաւոր զարգացման եւ Հայ լեզուի ճոխութեան հմտանալուն։

Այս ամէն առաւելութեանց հետ, գիրքը գնոյ մասին ալ մատչելի է ուսանողաց. բաւական ստուար հատոր մը ըլլալով հանդերձ, կազմեալ կը վաճառուի Յ դահեկանի։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

ԵՒ ՎԱՅԵԼՉԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն 1895, հջ 80

Ազգ. վարժարաններու մէջ շարադրութեան եւ նամակագրութեան դասերը աստիճանաւոր ընթացքով աւանդելու կարեւորութիւնը անժխտելի է. հայերէնի ուսուցիչները անշուշտ պէտք զգացած են դասագրքի մը որ դիւրին եւ արդիւնաւոր կերպով ուսուցանէ շարադրելու արուեստը։ Փորձով հաստատուեցաւ թէ այդ պէտքը լիուվի կը գոհացնէ մեր

Գործն . Հնիքաց Շարադրութեան և Վայելչաբանութեան ա-
նուն գիրը :

Բնական գերմնտիր ոճ , աստիճանական բաշխում եւ
դասաւորում , մաքուր և սահուն լեզու , շահեկան նիւթեր ,
շարադրութեան հիմնական օրենքներ , վայելչաբանական գիւ-
տեր , հարցեր , կրուրիւններ , օրինակներ , նկարագրութիւն-
ներ , նախադասութեանց կազմութեան վրայ հրահանգներ ,
եւայլն : Գին 3 դահ .

Դասատուներու եւ առանձին ուսանողներու համար պատ-
րասպուտած է նաեւ .

ԲԱՆԱԼԻ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

որ կը պարունակէ դասաւանդման եղանակը , հրահանգնե-
րուն եւ շարադրելի նիւթերուն ընդաշնումը , եւայլն :
Գին 10 դահ .

ԸՆՏԵԼԱՐԱՆ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

ՊԱՏԿԵՐԱԶՈՐԴ . ԵՒ ԽՈՇՈՐԱԳԻՔ

Առաջին զիրք այլուրենեն ետք

Բ . Տպագրութիւն 1896 , էջ 64

Բոլորովին նոր մեթոսով մը փոքրիկ մանուկները կը վարժին
ընթերցանութեան . առարկաներ եւ էակներ , կենդանի եւ
բոյս , գործիք եւ պիտոյք խումբ խումբ . կը ներկայանան ա-
շակերտին որ այդ դասաւորութեամբ որոշ եւ ամփոփ գա-
ղափար կ'ունենայ իրեն մօտ եւ ամենէն կարեւոր բաներուն
վրայ , որոնց թիւը հետզհետէ կրնայ աւելնալ քանի լայննայ
իր միտքք : Հարցումներու ընորհիւ իր ծանօթութիւնները լ'ըն-
դարձակին՝ առարկաներու գործածութեան , յօրինման եւ
այլ հանդամանքներուն վրայ :

Գին 2 դահ .

ՍԿԶԲՈՒՆՔ ՀԱՄԱՁԱՑՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՇԱՐԱԴԱՍՈՒԹԵԱՆ

Ա . Տպագրութիւն , 1894 , էջ 80

Գործնականէն տեսականը՝ այսինքն հատուածներէն կա-
նոնները հետեւցնելու մեթոսով՝ աշակերտը ընդհանուր վե-
րաքալ մը կ'ընէ Քերականութեան , եւ հիմնապէս կ'ըմբոնէ
բառերու պաշտօնը եւ կիրառութեան եղանակը . մեծագոյն
սատարն է քերականական ըլմանէն գրագիտական ըրչանը
թեւակոխելու , զարգացնելով՝ խօսելու , մտածելու եւ տրա-
մաբանելու կարողութիւնները : Գրքին յօրինուածքն այնքան
հրապուրիչ , այնքան դիւրին է որ Պատ . Ուսուցիչները բնաւ
դժուարութիւն չպիտի ունենան մեթոսին թափանցելու եւ
մէկ ակնարկով պիտի ըմբոնեն իրենց դասը հաճելի ընծայե-
լու գաղտնիքը : Գին 2 դահ .

ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ԱՅՐԵԵՆԱՐԱՆ

Ա . Տպագրութիւն , 1895 , էջ 32

Աշակերտը Պնակի կամ Շարժական Տառերու վրայ այր-
ուբէնը ճանչնալէ ետքք , այս առաջին գրքոյի մէջ կը վարժի
հեգելու՝ նշանակիչ բառեր եւ ապա դիւրին խօսքեր , առանց
ձանձրանալու :

Հասր 20 փարայ . 100 հասր 25 դահ .

ՏԱՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ ԿՐՈՆԻ ՈՒՍՄԱՆ

Ա . Տպագրութիւն , 1895 , էջ 104

Հին եւ Նոր Կտակարաններու եւ Հայ առաքելական ե-
կեղեցիի վարդապետութեան համաձայն յօրինուած .

Գործ ՎԱՐԴԱՆ ԱՍԼԱՆԵԱՆ

Կրօնական դիտելիքները դիւրըմբոնելի եւ պարզ ոճով
կ'աւանդէ պզտիկ տղոց՝ առանց զանոնք զբաղեցնելու ման-
րամասնութիւններով եւ տղոց մոքէն բարձր նիւթերով :

Այս նախափորձն ալ իր ուղղութեան եւ պարզ լեզուին համար գտած է իր արժանաւոր ընդունելութիւնը յօգուտ մանուկ աշակերտաց բարոյական—կրօնական գաստիարակութեան, որ մեծագոյն խնամոց կարօտ է մեր մէջ :

Գին 2 դահ.

MOUVELLE MÉTHODE ALPHABET FRANÇAIS

Դուք ՕՐ, ՍԱԹԻՆԻԿ ՀԱԼԵՊԵԱՆԻ

Ա. Տպագրութիւն, 1894, էջ 60

Մանկաստէկ զներու եւ Տարրական Նախակրթարաններու մէջ Գաղղիերէնի ուսման համար յարմարագոյն դասագիրքն է՝ բոլորին նոր եւ ինքնագիւտ՝ մէթոսով մը յօրինուած. մանկապարտէզ յաճախող փոքրիկները կրնան՝ առանց նոյն իսկ գաղղ. այրուքէնը ամբողջ սորված ըլլալու՝ առաջին օրէն նշանակիչ բառեր հեղել, կարդալ, թարգմանել եւ խօսելու վարժիլ:

Գին 2 դահ.

Դաստիարակութայի աշխատավոր Ըստ,
այս և որոշակ, Ջե 4 դահ. —

Դաստիարակութայի, Բարժ. Ա. Վ. Չափայով
(Ջոն Emerson White Jr.)
Ջե 5 դաստիարակութայի

Ինչպէս կը տեսնուի, մեր դասգրքերէն ումանց գինը զեղուած ըլլալով՝ Յայտագրիս հրատարակութեան թուականէն սկսեալ, նոյն հաշուով պիտի վաճառուին. բայց այդ թուականնէն առաջ եղած գործողութեանց համար առաջուան գիններու համեմատ կը կարգադրուին առկախ մնացած հաշիւները: Նոյնպէս, ներկայ հրատարակութեանս թուականնէն սկսեալ, զեղչի սակը վերջնականապէս որոշուած է 20%, մեր գրքերուն վրայ:

Ամէն Ռւսուցիչ իրաւունք ունի մէյմէկ օրինակ նուէր առանալու հրատարակուած եւ հրատարակուելիք գրքերէն, մէն մի օրինակի համար զրկելով 1 դահեկանի թղթադրում:

ՎԱԻԵՐԱՑՈՒՄ

Ստորեւ կը դնենք ցանկն այն գրքերու որոնք մասնաւորապէս Ա. Վ. Վարչութեան Պատ. Ռւսումնական Խորհրդականի կողմէ վաւերացուած եւ յանձնարարուած են: Նաեւ մեր ամբողջ հրատարակութիւնք ընդունուած են ազգ. Վարժարանաց մէջ գործածուելիք դասագրոց պաշտօնական Ծանոթին մէջ որ վաւերացուած է Ա. Վ. Պատրիարքարքանէն:

ՎԱԻԵՐԱՑՈՒՄ

Անուն գրի	Թիր	Թուական	Աւենապես	Աւենապիր
Ա. ՎԱՐԺ. ՄԱՆԿԱՆՑ	33 24	Ցուն. 1888	Յ. ԹԻՐԵԱՐԵԱՆ, Ն. ՓԱՓԱՃԵԱՆ	
»	125 30	» 1889	»	
Գ.	218 13	Ցուլ. 1891	Ո. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ, Գ. Ֆ. ՀԱՅՏԻԵԱՆ	
ՏԱՐԱԿԱՆ ՔԵՐԱԿՆՈՒԹ.	239 4	ՍԵՎ. 1891	»	Պ. ՔԵՐԷՍԹՀԵԱՆ
ԳՈՐԾՆ. ԸՆԹ. ՇԱՐԱԴՐ.	7 29	Ցուլ. 1892	»	
ՓՈՒՆՉ ՀԱՒԱԲԱՌՈՑ	8 29	» 1892	»	

Բացի այս Վաւերագիրներէ, Ա. Վ. Պաշտօնական մարմինք, Կրթական Վարչութիւնք եւ առհասարակ ամէն ձեռնհաս Ռւսուցիչը Պոլսէն թէ գաւառներէն մեզ զրկած են՝ իրենց փորձերուն վրայ յենլով գնահատական նամակներ, վերոյիշեալ դասագրոց օգտակարութեան եւ արդինաւորութեան մասին:

Լրագիրք եւ պարբերական Հանդէսք ալ ժամանակ ժամանակ նուիրեցին իրենց էջերը, քննելու, դատելու եւ գնահատելու մեր փանաքի աշխատութիւնները:

ՊԱՏԿԵՐ ԶԱՆԱԳՈՒՆ ՏՊԱԳԹՈՒԹԵԱՆՑ

Ա. ՊԱԼԻԹԵԱՆ ՊԱՍՏՎՐՈՅ



ԱՐԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ

Ա. Տիպ.	1888 Տպարան Արեւելի և Մասիս լրագրաց, հշ	78
Ա. "	(Խարդախնեալ նոյնուրեամբ)	" 78
Բ. "	1890 » Գ. Պալտաթեան	" 96
Գ. "	1892 » "	" 112
Դ. "	1893 » Ն. ձ. Արամեան	" 112
Ե. "	1895 » "	" 112

ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ

Ա. "	1889 Տպարան Արեւելի լրագրոյ	" 118
Բ. "	1892 » Ն. ձ. Արամեան	" 144
Գ. "	1894 » "	" 208

ԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ

Ա. "	1891 Տպարան Ն. ձ. Արամեան	" 142
Բ. "	1893 » "	" 200
Գ. "	1896 » "	" 208

ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. "	1891 Տպարան Ն. ձ. Արամեան	" 48
Բ. "	1892 » "	" 48
Գ. "	1894 » "	" 48

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ա. "	1894 Տպարան Ն. ձ. Արամեան	" 114
Բ. "	(Մամուլի տակ)	"

ՓՆՁԱԿ ՊԱՏԿԵՐԱՑԱՐԴ

Ա. "	1892 » Գ. Պալտաթեան	" 48
Բ. "	1894 » "	" 48

ՓՈՒՆՉ ՀԱՏԱՔԱՌՈՅ

Ա. "	1891 Տպարան Ն. ձ. Արամեան	" 60
Բ. "	1892 » Գ. Պալտաթեան	" 96
Գ. "	1895 » "	" 96

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒՆՉ

Ա. "	1884 Տպարան Գ. Պալտաթեան	" 240
Բ. "	(Մամուլի տակ)	"

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ ԴԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Ա. "	1892 Տպարան Գ. Պալտաթեան	" 70
Բ. "	1895 » Ն. ձ. Արամեան	" 80

ԲԱՆԱԼԻ ԴԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Ա. "	1892 (Վիմագիր)	" 96
Բ. "	(Մամուլի տակ)	"

ԸՆՏԵԼԱՐԱՆ ՀԱՑ ԼԵԶՈՒԻ

Ա. "	1893 Տպարան Գ. Պալտաթեան	" 64
Բ. "	1896 » Ն. Կ. Պերպէրեան	" 64

ՍԿՁԲՈՒՆՔ ՀԱՄԱՑԱՆՈՒԹԵԱՆ

Ա. "	1894 Տպարան Ն. ձ. Արամեան	" 80
	Alphabet Français ՕՐ. Ս ՀԱԼԷՊԼԵԱՆԻ	"

Ա. "	1894 Տպարան Գ. Պալտաթեան	" 60
	ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ ԿՐՈՆԱԿ	"

Ա. "	1895 Տպարան Ն. Կ. Պերպէրեան	" 104
	ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱՑԱՐԴ	"

Ա. "	1895 Տպարան Ն. Կ. Պերպէրեան	" 32
	ՀԱԽԾԵՆԺԱԿ ՊԱՏԿԵՐԱԾ	"

Նախընժակ Պատկերը որ ցոյց կուտայ թէ մեր գրքերէն խըսքանչիւրը քանի՛ տպագրութեանց հասած է, պերճախօս կերպով ցոյց կուտայ թէ անոնց պէտքն զգալի վիճելով, նոյն համեմատութեամբ ալ օգտակար եղած են իրենց սահմանեալ նորագույն: Խօսելով մասնաւրասից տաճկախօս գաւառաց համար պատրաստուած Դասընթացքին վրայ, Առաջին եւ Երկ-

րորդ Վարժուրիւն Մանկանցները չօշափելի արդիւնք տուած են՝ դպրոցական մանուկներուն առջեւ հարթելով ամէն դըժուարութիւն, անոնց սիրելի եւ մատչելի ընծայելով Հայ լեզուի ուսումը, եւ հասցնելով սերունդ մը որ գործնականապէս ընտելանալով մայրենի լեզուին՝ սկսած է դպրոցին մէջ ու դպրոցէն դուրս ալ խօսիլ եւ ծաւալել զայն. մինչդեռ առաջ, թկ տեսական եւ հարեւանցի կերպով միայն աւանդուելուն համար, կարելի չէր ըլլար արմատացնել եւ ընդհանրացնել Հայ լեզուն դպրոցական շրջանակէն դուրս (Տէ՛ս Ա. Վարժ. Մանկանց, Ս. Տիկ, Յառաջաբան) :

Իսկ հայախօս վայրեր՝ սկսեալ Կ. Պորէէն՝ հետզհետէ ձանչնալով մանաւոր առաւելութիւններն այն միթուններուն որով յօրինուած են մեր ձեռնարկներ, օր ըստ օրէ աւելի նախապատուութիւն տուին անոնց, եւ Պետական ու Սպային վարժարանաց մէջ լեզուի ուսման այլեւայլ ճիւղերը՝ Ընթերցանութիւն, Քերականութիւն, Համաձայնութիւն, Շարադրութիւն, Եւայլն՝ աւելի բանաւոր դրութեամբ աւանդուեցան ուսմանող մանուկներուն։ Մանկավարժական սկզբանց համաձայն նոր եւ դիւրընտել մեթոս, սրտագրաւ պարունակութիւն, նիւթերու զանազանութիւն, տղոց միտքը միշտ արթուն պահող հրահանգներ եւ լեզուի միօրինակութիւն՝ ահա այն առաւելութիւնները որոնք ջերմ ընդունելութեան եւ միահամուռ հաւանութեան արժանի ընծայեցին մեր յօրինած դասագրերը։ Հետաքրքրականն ու հաճելին օգտակարին ու պիտանիին հետ միացած՝ հիմնական կերպով աշակերտը նոյն ուսմանց եւ դիտելիաց մէջ մարզելու նպաստեցին։

Կան մեր գրքերուն մէջ՝ որոնց մեթոսը փոխ աւնուած է երուալական հեղինակներէ՝ մեր միջավայրին յարմար փոփոխութիւններով, կան ալ որ մեր փորձառութեան եւ ուսումնասիրութեան արդիւնք են. ի՞նչ փոյթ, ամէն արհետաւոր ալ միթէ փոխ չ'առներ ի հարկին՝ պէտք եղած յատակագիծն ու ատաղձը, անոնցմով ջնելու համար՝ տեղին, պարագային ու խնդրանքին համաձայն չէնք մը, կահ մը, գործիք մը։

Եւ քանի որ մեր յօրինած գործիքներն ալ կուտան ակնակալուած արդիւնքը, ըսել է նպատակայարմար են. կարեւորն ան է եւ հերիք է այսքանը։

Մեր մասին, թող ներուի այս արդիւնքէն գոհունակութիւն յայտնել եւ չնորհակալ ըլլալ այն Մեծարայ Ուսուցիչներուն որոնք իրենց գնահատումով եւ համակիր օժանդակութեամբ քաջալերեցին մեր աշխատութիւնները։

Բայց մենք միտք չունինք այս տեղ կանգ առնելու, այս արդիւնքով բաւականանալու, եւ մեր ձեռնարկները կատարելագործութեան դրույմը առած նկատելու։ Կրթական գործը տարուէ տարի յառաջդիմելու վրայ է. հետեւաբար ուշադիք պիտի ըլլանք մեր հրատարակութեանց մէջ ներմուծելու ժամանակին պահանջած բարեփոխութիւնները, որպէս զի աւելի օգտակար եւ աւելի նպատակայարմար ըլլան այսուհետեւ ալ։

Մենք առաջինն ենք մեր ձեռնարկներուն արթէքին անշանութիւնը խոստովաներու, բայց գո՞նէ մեր կարեաց չափով մեր օժանդակութեան բաժինը բերած ըլլալու գոհունակութիւնը վայելլ ներելի է մեղ, յուսանք։ Կարողագոյններ թող լիցնեն մեր թերին։

ԴԱՍԼՆԹԱՅՔ Հ ԱՅ ԼԵԶՈՒԻ

Բազմաթիւ Ուսուցիչներու խնդրանօք, կը հրատարակենք ահա Նախակրթարանի կարգերուն համապատասխանող դասադրքերու Ցանկը, ըստ ընկալեալ օրինաց։ Կը յուսանք թէ օգտակար պիտի ըլլայ այս աստիճանական Ցուցակն, միանգ ընդ միշտ ճշգելով թէ անձնիւր շրջանի համար ի՞նչ դասագիրք տալու է աշակերտաց, եւ թէ այս կամ այն գիրքը ո՞ր կարգին կը պատշաճի։

ՊՊ. Ուսուցիչը այս Դասընթացքի մասին իրենց դիտութիւնները մեզ հազորդելով չնորհակալեաց արժանի ծառայութիւն մը մատուցած կ'ըլլան յօդուտ ուսմանող մանկըտ-

ւոյն, վասն զի, ինչպէս վերեւ ըսինք, միշտ տրամադիր ենք փորձառութեան ցուցած բարեփոխութիւններն ի գործ դնել մեր պատրաստած գասագրոց եւ առաջաղթեալ դպրոցական ընդհանուր ուղղաթեան մէջ:

Այս Դասընթացքն հետզհետէ պիտի ընդարձակենք, Նաև խակրթաբանաց մէջ աւանդելի ուսմանց ուրիշ ճիւղերուն համար ալ հրատարակելով նպատակայարմար դրութեամբ դաշտագրքեր, որչափ որ միջոցները նպաստեն:

ՀԱՅԱԽՈՍ ԳԱԻԱՌԱՅ ՀԱՄԱՐ

Ա. Շրջան — Ալբուբենի, (Ճանօրութիւն տառերու, մանկական երգեր եւ խաղեր)

Բ. » — Ընտելարան Հայ լեզուի
Փնջակ

Գ. » — Դասարան Հայ Մանկանց
Փունչ Հաւաքածոյ
Տարրական Քերականութիւն
Սկզբանին Համաձայնութեան եւ Նարադասուր.

Դ. » — Երրորդ Վարժութիւն Մանկանց
Երկրորդ Փունչ
Լրացուցիչ Դասընթաց
Գործ. Ընթ. Նարադ. եւ Վայելչաբանութեան

Ե. » — Համառօս Քերականութիւն Գրաբար լեզուի
Երկրորդ Փունչ
Թարգմանութիւն Գրաբարէ աշխարհաբար
Նարադութիւններ աշխարհաբար (Չար.)
Ընթեցում եւ ի բերան ուսում գրաբար պարզ հատուածներու արձակ եւ ուսնաւոր:

Ծան. — Այս Ե. զրջանի գասագրոց ընտրութիւնը Պատ.
Ուսումնական Խորհրդոց Ծրագրին եւ վաւերացեալ Գրացման կին համեմատ կրնայ կատարուիլ:

ՀԱՅԱԽՈՍ ԳԱԻԱՌԱՅ ՀԱՄԱՐ

Ա. Շրջան — Ալբուբենի եւ Հեղարան
Փնջակ

Ուսումն ինտենսիվ եւ գործածական բառերու
Բ. » — Ալպաշին Վարժութիւն Մանկանց
Ընտելարան Հայ լեզուի


Գ. » — Երկրորդ Վարժութիւն Մանկանց
Փունչ Հաւաքածոյ
Տարրական Քերականութիւն
Սկզբանին Համաձայնութեան եւ Նարադասուր.

Դ. » — Երրորդ Վարժութիւն Մանկանց
Երկրորդ Փունչ
Լրացուցիչ Դասընթաց
Գործնական Ընթացք Նարադութեան եւ Վայելչաբանութեան:

Ե. » — Համառօս Քերականութիւն գրաբար լեզուի
Երկրորդ Փունչ
Թարգմանութիւն գրաբարէ աշխարհաբար
Նարադութիւններ աշխարհաբար (Չար.)
Ընթեցում եւ ի բերան ուսում գրաբար պարզ հատուածներու արձակ եւ ուսնաւոր

Ծան. — Որովհետեւ մեր ցարդ հրատարակած դասագրքերը միայն հայ լեզուի ուսման յատկացեալ են, ներկայ Դասընթացքին մէջ նշանակեցինք այդ գրքերու անունները միայն: Դաւառացի ուսուցիչք, եթէ փափաքին, լեզուաց եւ ուսմանց ուրիշ ճիւղերու համար ալ ի հարկին կրնանք Ծրագիր եւ Դասացուցակ կազմել եւ գործուելիք դասագիրքերը նշանակել:

Գործակալութիւնը պատրաստ է նաեւ, ի դիւրութիւն Պատ. Դասաստուաց, կրթական ո՛ր եւ է խնդրոյ համար իշրեն ուղղուած հարցումներուն պատասխան տալու եւ խորհրդակցութիւններ կատարելու դպրոցավարութեան եւ ուսումնական ուղղութեան մասին:



Բ.

Հրատարակութիւն

ՈՒՐԻՇ ՀԵՂԻՆԱԿԱՑ ԵՐԿԵՐՈՒՆ

Գործակալութիւնը կը ստանձնէ նաեւ ուրիշ հեղինակներու եւ ուսուցիչներու կողմէ պատրաստուած կամ թարգմանուած գրքերը՝ մանաւանդ դասագրքերը հրատարակել. այս յանձնառութիւնը կ'ըլլայ երկու ձեւով.

1. Մասնաւոր պայմաններով գրքին հեղինակութեան կամ ըսկ տպագրութեան իրաւոնքը գնել եւ տպել ի հաջիւ Գործակալութեան :

2. Ծախքը հեղինակին կողմէ հոգացուելով՝ ըսկ տպագրութիւնն ու յարակից աշխատութիւնները կատարել եւ վաճառել ընկերովի կամ միայն ի հաջիւ հեղինակին :

Այս երկու ձեւերէ մին կամ միւսն ընտրել Գործակալութեան կը վերաբերի, որուն համար կարելի է բանակցիլ եւ պայմաններու մասին համաձայնիլ՝ կանխաւ զրկելով տպագրելի գրքին ձեռագիրը՝ երկու օրինակ :

Գործակալութիւնը արդէն հրատարակած է Օր. Սաթինկ Հայութանի Mouvelle Méthode Alphabet Français եւ Պ. Վ. Սալանեանի Տարրական Ընթացք Կրօնի Ուսման անուն գրքերը եւ դեռ ունի յարմարագոյն ժամանակի մէջ հրատարակելի գրքեր :

Կը յուսանք թէ իրենց ընծայուած այս գիւրութիւններէն կը քաջալերուին նորագիթիթ տաղանդներ որ, դեռ անփորձ գտնուելով կը վարանին հրատարակ ելլերու :

Վաւերացման, գործերու սրբագրութեան եւ այլ աշխատութեանց հսկել եւ հոգ տանիլ մեղի կը վերաբերի :

Գ.

Տպագրական գործեր

Տպագրուելիք ո՞ր եւ է գործ ունեցողները կրնան մեզի յանձնարարել: Գործակալութիւնը իր տրամադրութեան տակ ունի մասնաւոր միջոցներ՝ լաւագայն, արագ եւ խնամով կատարելու այս կարգի գործերը, ինչպէս են.

Այցեւում, Շրջարերական, Նամակագլուխ, Հաշուեցոյց, Հրաւիրագիր, Մահապդ, Ծանուցում, Հասցեթուղթ, Մուրհակ, Դարոցական վկայագիր, Վհճակացոյց, Տեղեկագիր, Բարենիշ, Պատուանիշ, Գիրք, Եւայլն, Եւայլն:

Այս աշխատութիւնք կրնան ըլլալ ամէն լեզուէ, որոնց խմբագրութիւնն ալ կը կատարուի թէ՝ տեղական եւ թէ՝ օտար լեզուներով:

Կատարուելիք աշխատութեան համար սակարկուած վարձքը, փոխագրութեան ծախքը, Եւայլն՝ ամբողջապէս կանխիկ վճարուելու է:

Դ.

Հայթայթում դասագրիերու

Գործակալութիւնը կը կատարէ յանձնարարութիւններ ևս մէն տեսակ եւ ամէն լեզուով գրքերու, ինչպէս եւ դպրոցական ու դասական պիտոյքներու: Կրնայ հայթայթել՝ իր հրատարակած գրքերէն զատ, բոլոր հեղինակաց գործերը, ինչպէս ՊՊ. Գարագալեանի, Մամուրեանի, Արփեանի, Կարապետեանի, Եւայլն. — Պաղտատեան եւ ուրիշ Տպարանաց հրատարակութիւնները. — Էջմիածին, Երուսաղէմ, Տփղիս,

Վիէննա, Վենետիկ, Իզմիր, Բարիղ եւ ուրիշ տեղեր տպուած ամէն տեսակ գրքեր, Լրագիրներ, Հանդէսներ եւ որ ի կարգին: Դիրութիւններ կ'ընծայուի վարժարանաց՝ Մատենադարաններ կազմելու, որպէս զի ուսանող մանուկներն, իրենց առօրեայ դասերէն դուրս գրքեր ալ գտնեն կարդալու, իբրեւ ամբողջացուցիչ մաս կրթութեան: Այս մտօք քիչ մը ջանք եւ գոհողութիւն ընել կարեւոր է եւ փափաքերի: Եւ թէ պէտ դպրոցական ճոխ մատենադարան մը կազմելու համար չունիք ուրիշ ազգերու պէս բազմաթիւ եւ բազմազան գրքեր՝ պատմական, աշխարհագրական, ուղեւորական, արուեստական, գիտական, վիպական, բանաստեղծական, եւայլն, բայց կարելի է առձեռն գտնուած մատեաններով ալ կազմել Մատենադարան մը՝ միայն թէ լաւ ընտրութիւն ընել հարկ է: Այս մասին ընդարձակ տեղեկութեանց պէտք ունեցողները կրնան մեզի դիմել:

Դասական եւ դպրոցական պիտոյք՝ լրացուցիչ տարբեր եւ օժանդակներ են ուսանողական կրթութեանց. հետեւարար միայն դասագիրքով գոհանալ կարելի չէ. աշակերտ մը պէտք ունի նաեւ մատիտի, թղթի, կաղամարի, մելանի, քանակի, տետրակի, գծագրական պիտոյից, կարկինի, ներկի, եւայլն:

Նոյնպէս վարժարաններու համար անհրաժեշտ է ուշնեալ մանկապարտէզի վերաբերեալ նիւթեր եւ խաղալիկներ, աշխարհացոյց տախտակներ, երկրագունոտ, իրագիտական առարկայից հաւաքածոյ, պատկերներ եւ նկարներ, բնագիտական, բնապատմական եւ այլ կարգի գործիքներ, տախտակներ եւ պատկերներ, դպրոցական եւ մանկավարժական լրագիրներ, հանդէսներ, եւայլն:

Սղկանց դպրոցներու համար կարեւոր են նաեւ ձեռագործի նիւթեր, ձեւագիտութեան գործիք, եւայլն:

Արդ՝ Գործակալութիւնը կարող է այս կարգի ամէն յանձնարարութիւններ կատարել ամենալաւ պայմաններով:

Դպրոցական յանձնարարութեանց առթիւ պէտք է ուշ զնել սա կարեւոր կէտերուն,

1. Յանձնարարութեանց արժէքը կանխիկ դրկուելու է՝ գէթ մօտաւոր հաշուով:

2. Յանձնարարուած գրքերուն քանակութիւնը, տեսակը, հեղինակին եւ ի հարկին նաեւ տպարանին անունները՝ ինչպէս եւ քանիերորդ տպագրութիւն ըլլալը որոշ գրուելու է:

Ծան. — Կարելի է, սակայն, այս ծանօթութիւնները չի տալ եւ ընտրութիւնը մեր կամքին թողուշ՝ միայն նշանակեալ լով թէ ո՞ր դասարանի համար եւ ի՞նչ ճիւղի վերաբերեալ գիրք է պէտք եղածը:

3. Որոշակի գրել թէ որո՞ւ հասցէի դրկուելու են, եւ ի՞նչ միջոցով (փոսթո՞վ թէ մնտուկով):

4. Երրորդ անձի մը միջոցաւ գիրք ապսպրելէ աւելի լաւ է ուղղակի մեզի գրել, որով սխալ գիրք չնրկուիր եւ աւելի զեղչ կը տրուի վարժարանին:

5. Օսմ. ոսկին 108, մէճիտը 20, ֆրանքը 4 $\frac{3}{4}$ դրուշի հաշուով կ'առնուին:

Մեզի դրամ զրկել կարելի է կամ դրամածրարով, կամ մեր հրամանին վճարելի փոխանակագրով եւ կամ նամակի ներփակելով փոսթի փուլ, իթէ մինչեւ 100 դրուշի ապսպրանք է:

Ծան. — 100 հատ փուլը 100 դրուշի հաշուով կ'ընդունուիր, այսինքն մէճիտիցէն 19 էն փոքրագուակ յանձնարարութեանց համար:

Եթէ փոխարժէքը կանխիկ դրկուած չէ, յանձնարարութիւնը չկատարուելուն համար պատասխանատութիւն չենք ստանձներ: Բայց ամէն կերպով պատասխանատու ենք եւ ամէն ջանք ու խնամք կը պարտինք յանձնարարութիւնն անյապաղ եւ ճշգիւ կատարելու, երբ փոխարժէքը կանխիկ է:

Մեր գրքերուն զեղչի սակն է միօրինակ 20. — փոսթի, փոխադրութեան եւ մաքսային ծախքերը յանձնարարութին պատկանելով:

Պատրիկ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Գործակալութիւնը կը հաւանի նաեւ ապառիկ դրկել իր հրամարակած գրքերը, պայմանաւ որ Պոլոյ մէջ ցոյց տրուի

վատահելի երաշխաւոր մը, որ յանձն առնէ անոնց արժէքը
մեր հրամանին վճարել որոշեալ պայմանաժամի մէջ :

Բայց դրան գնուելիք որ եւ է գրքի կամ գպրոցական
պիտոյքի արժէքը պէտք է ամբողջովին կանխիկ վճարուի : Ա-
սոր փոխարէն, Գործակալութիւնը, գոհացնելու համար իրեն
դժմողները, յանձն կ'առնէ գրսէն գնուած գրքերուն զեղչն
ըսն մը չվերապահել իրեն՝ այլ ամբողջովին թողուլ յանձ-
նարարովին, միայն առնուազն Զ եւ առաւելն 5 % գօմիսիոն
մը առնելով ըստ քանակի յանձնարարութեան :

Դրկուած գրքերու եւ հաշուեցոցակի մասին ո՛ր եւ է
դիտողը թիւն լուի է մինչեւ Զ ամիս :

ԶՐԻ ԴԱՍԱԳԻՐՔԵՐ

Գործակալութիւնը միշտ պատրաստ գտնուած է աղքատ
ուսանողաց օժանդակելու՝ անոնց նուիրելով իր սեփական դա-
սագրքերէն : Սակայն, որպէս զի սխալանք կամ ուրիշ անտե-
ղութիւն եւ զեղծում չպատահի, հարկ է որ գաւառական
վարժարանաց Հոգաբարձութիւնք կամ Թաղ. Խորհուրդք
պաշտօնական նամակով ուղղակի մեջի յայտնեն աղքատ աշա-
կերտաց թիւը եւ ո՛ր դասարանի պատկանիլ՝ որպէս զի, նոյն
համեմատութեամբ, պատկանեալ դասարանին յատուկ գրքերը
դրկուին, փոխադրութեան ծախքը իրենց պատկանելու պայ-
մանաւ :



Ե.

ՀՅՈՒՐՈՒԹԻՒՆ ՊԱՇՏՈՆԷԼԻ ԻՋ

Ուսուցիչ դասին վիճակը օր ըստ օրէ բարելաւութեան
հասցնելու պէտքը փաստաբանել աւելրդ է : Յաճախ արժա-
նաւորներ կը մնան մութի մէջ, առանց քաջալերութեան,

նո՞յն իսկ առանց պաշտօնի եւ ապրուստի միջոցներու, մինչ-
դեռ ուրիշներ՝ գուցէ նուազ արժանաւորներ՝ չնորհուկով,
կողմանակցութեամբ եւ այլ միջոցներով աւելի բաղդաւոր կը
գտնուին ապահովուած տեսնելու գէթ իրենց նիւթականը :
Մայրաքաղաքը եւ իր արտարձանները դիւրութիւն կրնան
ունենալ իրենց ընտրութիւնն ընելու ամէն անգամ որ դասա-
տու ուղեն փոխել . բայց գաւառնե՞րը: — Կը յիշուի թէ մինչեւ
մօտ ատեններ գաւառներու կրթական վարիչները՝ ուսուցիչ
գտնելու համար՝ կը դիմէին կամ Ուսումն. Խորհրդին կամ ո՛ր
եւ է լրագրի վարչութեան եւ կամ Պոլսոյ մէջ իրենց ծանօթ-
անձի մը: Ասոնցմէ առաջինը իր շատ աւելի կարեւոր զբաղ-
մանց մէջ ի՞նչպէս ժամանակ գտնէ այս տեսակ գործով մը
զբաղելու: Լրագրաց վարչութիւնք ի՞նչ պարտք ունին իրենց
ժամանակն ու ուշը յատկացնելու այս կարգի խնդրոց, որոնք
լրագրական շրջանակին դուրս են: Իսկ մասնաւորներ, թո՛ղ
թէ շատ անգամ ձանձրոյթ ու բեռ կը նկատեն այս տեսակ
գործեր, այլ եւ իրենց ընտրութեան մէջ շատ անգամ սխա-
լելու եւ խարուելու ընդունակ են:

Վերջապէս, մէկ կողմէ պաշտօնեաները եւ միւս կողմէ
պաշտօնէի պէտք ունեցողները բազմադիմի դժուարութիւն-
ներէ ազատելու համար, պէտք էր կեդրոն մը հաստատել ուր
խնդրանք եւ մատուցում զիրար գտնէին եւ անպաշտօն ու-
սուցիչք եւ վարժուհիք վստահութեամբ ու արժանապատու-
ութեամբ դիմէին իրենց աստիճանին ու կարողութեան հա-
մապատասխան պաշտօն մը ձեռք բերելու:

Այս կեդրոնն է Դաւթեան Գործակալութիւնը որ, առա-
ջին ըլլալվ իր տեսակին մէջ, կինդ տարիէ ի վեր ամէն ջանք
ի գործ կը դնէ դիմագրաւելու այն դժուարութեանց որ ան-
բաժան են ամէն գեղեցիկ գաղափարի եւ ձեռնարկի առաջին
քայլերէն :

Հոս քանի մը հարցում կը ներկայանայ մեզ.

1. Թէ մենք կարո՞ղ ենք այդպիսի գործ մը վարելու:
2. Թէ մեր ձեռնարկին օգտակար կրցած է ըլլալ ցարդ:
3. Թէ դեռ ի՞նչ միջոցներու պէտք կայ աւելի եւս ար-
դիւնաւորելու այս ձեռնարկը:

Ահա երեք հարցեր որոնց պիտի ջանանք պատասխանել.

1. Իբրեւ նախկին աշակերտ բարձրագոյն վարժարանի մը. իբրեւ ուսուցիչ որ բաւական տարիներ ի Պոլիս եւ ի գաւառս ջանացած է օգտակար ըլլալ կրթական գործին. իբրեւ այսքան տարիներ դպրոցական խնդիրներու, ինչպէս եւ գաւառական կեանքին հաւասարապէս հետամուած եւ փորձառութիւն ստացած մէկը, կը կարծենք թէ Գործակալութեան վարիչը ամենէն յարմարն ու ատակն է այսպիսի գործի մը:

2. Գործակալութեան հիմնարկութենէն (1892 էն) ի վեր պաշտօնի զրկուած 100 ի չափ ուսուցիչները, գրիթէ առանց բացառութեան, մէկ տարիին աւելի մնացած են իրենց պաշտօնին մէջ, անոնց կէսէն աւելին՝ երեք եւ աւելի տարիներ շարունակած են վարել իրենց պաշտօնը. —ինչ որ կ'ապացուցանէ թէ կատարուած ընտրութիւններն ըստ մեծի մասին քաջայարմար եղած ևն՝ պաշտօնին, տեղին, քաղաքին եւ այլ հանգամանքներուն:

Մեր փափաքն ու ջանքն եղած է խնդրանքին լիուլի համապատասխան հանգամանքներ ու արժանիք ունեցող ուսուցիչներ առաջարկել. Ոչ միայն այսքան, այլ եւ մեր դիտումն եղած է ընտրել, հմտութեան հետ մէկտեղ բարյական նկարագիր կազմելու ընդունակութիւն ունեցող կրթական պաշտօնեաներ, որոնք գիտնան թէ ո՛ւր կը ձգտի բուն կրթութիւնը. Եւ եթէ երեք պատահած է որ մեր այս դիտումը չենք կրցած լիովին գործադրել, այդ վրիալումը աւելի պարագաներէն ու մեզմէ անկախ պատճառներէ առաջ եկած է, քանի որ ձեռնհաս Մարմնոյն կողմէ շնորհուած վկայագրերն աւ շատ անգամ վրիալանքի տեղի կրնան տալ:

3. Հինգ տարուան փորձով ու մասնաւոր հոգածութեամբ Գործակալութիւնը այսօր հասած է այնպիսի կազմակերպութեան մը որ, կրնանք ապահովապէս ըսել թէ, այլ եւս մնցուցած է իր առաջին խարթագումներն, եւ՝ տեւականութիւնն ապահովուած ըլլալով՝ հանրութեան կը մնայ անոր ընծայել հարկ եղած քաջալերը. վասն զի, Գործակալութիւնը թէեւ անհատական ձեռնարկ մը, սակայն աչքի առջեւ առնելով աւ

նոր հանրօգուատ նպատակը, արժան եւ արդար է որ նկատուի հանրային հաստատութիւն մը որ կը ձգտի օրէ օր, — իբրեւ ընծայուած աջակցութեան չափով — եւս քան զեւսօգտակար ու արդիւնաւոր ըլլալու։ Եւ որովհետեւ Ուսուցիչներուն առաւելապէս ձեռնուու եւ օգտակար ըլլալ կը նկրտի, ամէն ազգային Ուսուցչի շահը կը պահանջէ որ Գործակալութիւնն հետզհետէ աւելի բարդաւաճ ու գորաւոր դիրք մ'ունենայ. Եւ ինչ չափով որ իբրեւ սատարեն առ այս, ու կատարեն իրենց պարտականութիւնը, նոյն չափով եւ աւելի ալ պիտի կրնան՝ իբրեւ իրենց իրաւունքը՝ փոխադարձաբար վայելել ամէն դիրքութիւն, ձեռնուութիւն եւ նպաստ՝ իրենց նիւթական եւ բարոյական զարգացման համար։

Անուբանալի է թէ մեր այս ձեռնարկը եւ նպատակը չի կրնար տալ իր բովանդակ արդիւնքը եթէ չվայելէ զինաւորապէս դասատուաց եւ ուսումնասէր անձանց համակիր աշակցութիւնը. Եւ, անցեալին դատելով՝ սիրելի էմեզ յուսալ թէ այսուհետեւ ալ այդ համակրութեան եւ քաջալերութեան արժանի պիտի նկատուինք։

Հետեւաբար Դաւթեան Գործակալութիւնը պատիւ ունի ծանուցանել կ. Պոլսոյ եւ գաւառաց Պատ. Թալ. Խորհրդոց, Ուսումնական խորհրդոց, Հոգաբարձութեանց եւ ամէն դըպրոցական վարչութեանց՝ թէ պատրաստ է զրկել իրենց՝ դըպրոցական պաշտօնեայներ — Տնօրէն, Մասնագէտ-դասասոու, Դաստիարակ-ուսուցիչ, Վարժուհի, Եւայլն՝ ըստ, պահանջման Կազմական Կանոնագրի եւ ըստ առաջարկեալ պայմանաց։

Պէտք է որոշակի իմացնել թէ ուզուած պաշտօնեայն ի՞նչ աստիճանի վկայագիր, ի՞նչ ձիւղերու հմտութիւն եւ ի՞նչ մասնաւոր հանգամանք ունենալու է, ի՞նչ պաշտօնի համար կ'ուզուի, ի՞նչքան թոշակ կրնայ վճարուիլ եւայլն, եւայլն։

Պէտք է նաեւ զրկել ընտրելիին վճարելի առաջին ամսականն ու ձամբու ծախքը, եւ ի հարկին պայմանագիր կընքելու արտօնել զործակալութիւնն։

Խնդրանքին եւ առաջարկեալ պայմաններուն համեմատ,

Գործակալութիւնը ընտրելիներ կ'առաջարկէ ըստ այնմ կատարելու համար վերջնական ընտրութիւնը:

Միւս կողմէ Գործակալութիւնը Պատ. Դաստիարակուաց կ'ընդայէ ամէն աշակեցութիւն, կատարելով անոնց յանձնարարութիւններն: Անպաշտօն Ուսուցիչներուն եւ Վարժուհիներուն կը հայթայիշէ պաշտօն, իրենց կարողութեան եւ արժանիքին համեմատ:

Փորձը ցոյց տուած է թէ Դաւթեան Գործակալութիւնն, իրեւ կեդրոն դպրոցական պաշտօնէից, օգտակար եղած է թէ Ուսուցիչ Դասուն եւ թէ Կ: Պուսայ ու Գաւառաց ազգ. դպրոցներուն՝ միջնորդելով անոնց յարաբերութեանց եւ ընձեռելով ամէն դիւրութիւն՝ մէկ կողմէ պաշտօն փնտողներուն եւ միւս կողմէ պաշտօնէի պէտք ունեցողներուն:

ԱՐՁԱՆ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտօն փնտող Ուսուցիչներ եւ Ուսուցչուհիներ պարագին ունենալ Ուսուցչութեան Վկայագիր, ըստ տրամադրութեան Պետական եւ Ազգ. Օրինաց. Նաեւ կանխաւ Գործակալութիւններուն հաղորդելու են իրենց կենսագրութիւնն, որոշելով իրենց մասնագիտական ճիւղերն եւ պայմաններն:

Այն անձինք որ, մեր մօտ արձանագրուելք ետք, ուրիշ միջոցով պաշտօն կը գտնեն, պէտք է իմաց տան մեզի:

Նոյնպէս հասցէի կամ բնակութեան փոփոխումը պէտք է անմիջապէս իրացնել մեզ՝ անձամբ կամ նամակով:

Պատ. Ուսուցիչներէն կը խնդրուի փութալ արձանագրութիւն Գործակալութեան Տումարին մէջ՝ հետեւեալ կենսագրական եւ այլ տեղեկութիւնները տալով:

Ծան. — Գաւառացի Ուսուցիչք պարտին այս տեղեկութեանց հետ դրկել 20 դահնեկանի փոսթայի փուլ՝ նամակի եւ ի հարկին հեռագրի ծախուց համար:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1. Անուն եւ մականուն
 2. Տարիք, 3. Հայրենիք
 4. Հպատակութիւն
 5. Ամուրի՞ թէ ամուսնացած է
 6. Ո՞ր դպրոցէ եղած է եւ ո՞ր քուականին
 7. Ի՞նչ ճիւղերու հմուտ է

 8. Ի՞նչ պաշտօններու մեջ գտնուած է ցարդ, ո՞րշափ աշեն եւ ի՞նչ պայմաններով

 9. Պաշտօնավարած տեղերէն վկայագիր ունի՞
 10. Ուսուցչական վկայագիր առաջ է, ի՞նչ ճիւղերու համար եւ ի՞նչ աստիճանի

 11. Ի՞նչ պաշտօն կ'ուզէ
 12. Ի՞նչ անսականով կրնայ գոհանալ
 13. Հասցէ
 14. Թուական արձանագրութեան
 15. Մասնաւոր ծանօթութիւններ
- 16 Սուրագրութիւն

ԳԼԽԱԿՈՐ ՊԱՅՄԱՆ

Գործակալութիւնը, իր աշխատութեանց փոխարէն, պաշտօնի զրկուելիք անձերէն կանխիկ կը ստանայ յանձնաւարողչք՝ անոնց մէկ ամսականին հաւասար գումար մը:

Այս քանակէն կրնայ զեղչ մ'ըլլալ ընտրելիին նիւթական կարողութեան եւ ընտանեկան վիճակին համեմատ:

Պաշտօնեայ ուզողներէն ո՛ր եւ է վարձք չի պահանջուիր, բացի 5 դահ. արձանագրութեան տուրքէն:

«Առանց փոխարինութեան» բանաձեւը որ մերթ կը յեղյեղուի եւ իրեւ հրապոյր կամ խայծ կ'առաջարկուի ոմանց կողմէ, պարզապէս ծիծաղելի է: Առանց փոխարինութեան գործ չըլլար. գործնական միտք մը այդ տեսակ բան չընդունիր: Կը զգուշացնենք Պատ. Ուսուցիչները այդ կարգի խարեպատիր թելադրութիւններէ, որոնց հետեւանքն աւելի սուզի կը նստի իրենց՝ քան բացորոշ եւ օրինաւոր կերպով պահանջուած յանձնարարողչք մը, որպէս է մերն:

Գործակալութիւնը կը չանայ ըստ կարի բարձրացնել ուսուցչաց դիրքը, եւ համեմատաբար լաւ պայմաններով պաշտօնի կարգել տալ: Բայց ուսուցիչներուն կ'իյնայ օր օրի աւելի բարոյական, մտաւորական եւ նոյն իսկ նիւթական զարգացում ձեռք բերել, պատուաւոր դիրք գրաւել ազգին մէջ իրենց պարտաճանաչութեամբ, աշխատասիրութեամբ եւ անձնուիրութեամբ դէսի իրենց նուիրական պաշտօնը, այնպէս որ հետզիւտէ աւելի գնահատուին, պատկանելի հանդիսանան, եւ իրենց պաշտօնն ու դիրքը խախուտ եւ քիմահաճոյքի առարկայ չըլլայ:

 Գործակալութիւնը, ի դիւրութիւն հասարակութեան, պէտք ունեցողներուն կ'առաջարկէ եւ պաշտօնի կը դնէ նաեւ Գրագիրներ, Գործակատարներ, Հաշուակալներ, Հաւաքիչներ եւ այլ այս կարգի պաշտօնեաներ՝ որոնցմէ կանխաւ երաշխաւորութիւն կ'աւենուի, պաշտօնին պահանջած կերպովը:

Ասոնք ալ պարտին համակերպիլ վերոգրեալ պայմաններուն:

ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՇՏՕՆԵՒՑ



ԱՐ ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ա. Պոլիս

Կարեւոր եղած կենսագրական ծանօթութիւնները ևերկայ Տեղեկագրին մէջ տրուած ըլլալով՝ կը խնդրեմ որ լու այն կատարե արանագրութիւնն:

Գործակալութեան վճարելի գումարին վերաբերեալ պայմաններն յարգելու յօժար եմ:

(Թուական)

(Սուրագրութիւն)

Զ.

Յանձնակատարութիւն

Այս գաւառացիք որ Պոլսոյ մէջ կարգադրուելիք ո՞ր եւ է գործ ունին, վաստահոթեամբ թող դիմեն մեզի, քաջ գիտնաւով թէ իրենց յանձնելիք գործին բնութեան եւ պահանջման համեմատ, կարեւորը պիտի մոնօրինուի մեր կողմէ, յոյժ չափաւոր պայմաններով. այսպէս, կրթական խնդրոյ մը վրայ կարծիք եւ խորհրդակցութիւնք, առեւտրական եւ անհատական խնդրոց վրայ մասնաւոր տեղեկութիւնք եւ տնօրինութիւնք, դատական եւ այլ պաշտօնական գործոց կարգադրութիւն ի ձեռն փաստաբանաց եւ դատարանաց՝ ամենայն խնամով եւ գաղտնապահութեամբ կը կատարուին, միշտ ի նկատի առնելով յանձնարարողին օգուտով։

Այս կարգի գործերու, ինչպէս ուրիշ ամէն յանձնարարութեան համար, Գործակալութեանս ծախքերն ու ստանալիք վարձքը կանխաւ ապահովել հարկ է։

Ե.

Առեւտրական նիւդ

Գործակալութիւնը ունի մասնաւոր միջոցներ եւ դիմութիւններ՝ օգտակար ըլլալու նաեւ վաճառական եւ առեւտրական անձերուն, որոնք կ'ուղեն Պոլսոյ մէջ գնել կամ վաճառել ո՞ր եւ է ասլուննք։ Գաւառներէն դրկուած տեղական արտադրութիւններն ու բերքերը կրնայ Պոլսոյ հրապարակին վրայ վաճառել ի հաջիւ դրկողին, միայն ստանալով 2—5 վարձք մը, ըստ կարեւորութեան գործին։

Նոյնպէս կրնայ Եւրոպայէն ապապրել կամ Պոլսոյ հրապարակէն գնել եւ խրկել ամէն կարգի ներածելի ապրանք՝ (զարդեղնք, մանրեղնք, կերպասեղնք, դեղեր, գործիքներ եւ այլ ամէն նիւթեր որոնց ի թուրքիա մուտքն արգիլուած չէ) բաւական է որ յանձնարարողը ճշդիւ նշանակէ անոնց տեսակը, քանակը, եւայլն, եւ կանխիկ կամ որոշեալ պայմանաժամով վճարէ անոնց փոխարժէքը։

ՊԱՆԴՈՒԽՍ ՈՒՍՍԱՆՈՂՆԵՐ

Գործակալութիւնը յանձն կ'առնէ, գաւառացի տղաքը Պոլսոյ վարժարանաց մէջ ընդունել տալու համար, Ուսանողաց ծնողներուն կողմէ բանակցիլ Տեսչութեանց հետ, ընդունելութեան պայմանները ճշդել, Պոլսոյ մէջ աշակերտաց ծնողներուն Ներկայացուցիչն ըլլալ եւ ամէն դիմութիւնու աջակցութիւն ընծայել պանդուխտ ուսանողներուն։

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԳԱՒԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

Գաւառական դպրոցներու Մեծ Տնօրէններէն եւ Գաւառտուններէն կը խնդրուի հետեւեալ հարցումներուն պատասխանը մեզի հաղորդել։

Հարցարան

1. Քաղաքիդ մէջ քանի՞ հայ դպրոց կայ։
2. Բողոքական եւ կաթոլիկ դպրոցներ ալ կա՞ն։
3. Մէն մի դպրոցի անունն ի՞նչ է. քա՞նի աշակերտ եւ քանի՞ աշակերտուհի կը պարունակեն։
4. Որքա՞ն է մէն մի դպրոցի տարեկան ծախքը՝ գէթմօտաւոր հաշուով։
5. Քանի՞ դասաւոր եւ վարժուհի կայ. ի՞նչ է անոնց անունը, տարիքը եւ աւանդած ճիւղը։
6. Աշակերտք եւ ուկիք քանի՞ դասարանի բաժնուած են։
7. Ի՞նչ աստիճանի վարժարաններ են. (Տարրակա՞ն, Միջի՞ն թէ Բարձր)։
8. Ի՞նչ դասագրքեր կը գործածուին։
9. Որո՞նք են դպրոցաց Հոգաբարձուները։
10. Դպրոցի բարեկամ երիտասարդները որո՞նք են։
11. Աղքատ տղոց դասագիրքը ի՞նչ կերպով կը հայթայթուի. Ասոր համար հասոյթի մասնաւոր աղբիւր կա՞յ։
12. Դպրոցը մատենադարան ունի՞։

ԹՂԹԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Թղթակցութիւնք կը կատարուին Հայերէն, Թուրքեան եւ Գաղղիերէն:
2. Մեզի ուղղեալ նամակները պէտք է յստակ եւ ընթեռնի գրուած ըլլան:
3. Հստ կարի համառօտ գրել, որոշակի եւ միայն կարեւորը՝ առանց սեթեւեթի եւ աւելորդաբանութեան: Զգուշանալ պատռւանուներէ եւ աւելորդ վերադիրներէ:
4. Նամակին մէջ յիշուած այլ եւ այլ նիւթերը եւ յանձնարարուած գործերը թուանշանով զատել:
5. Նամակները պէտք է ուղղուին առ

Սմբատ Դաւթեան

Թիւ 16, Գազանիեր իսան, Պահաճ Գարու

S. Davidian, Kazasker han
در سعادت ده قو سنه فاضي عيسى خانندو سپاد داوديان
Zahide Karap, Consule

Ծան. — Կը փափաթինք Գաւառաց մէջ Գոշակալներ եւ Թղթակիցներ ունենալ: Անոնք որ այս պատճենին փափառող են, քող հանին մեզ իմացնել իրենց հաւանութիւնը:



Սոյն Յայտագիրին գինն է 2 դահ.

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL014309

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Դաւթեան Գործակալութեան

			Դահ
1.	Ա. ՎԱՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ	Հիմքեալոց Տիպ.	3
2.	Բ.	"	5
3.	Գ.	"	5
4.	ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ	"	2
5.	ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՔ	"	3
6.	ՓՆՁԱԿ, ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ	Վելորդ	1½
7.	ՓՈՒՆԶ, ԱՇԽԱՐԴ ՀԱԽԱԲՈՅՑ Վելորդ	"	3
8.	ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒՆԶ		6
9.	ԳՈՐԾՆ. ԸՆԹ. ՏԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ Վելորդ	"	3
10.	ԲԱՆԱԼԻ ՏԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ		10
11.	ԸՆՏԵԼԱՐԱՆ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ	"	2
12.	ՍԿՋԲՈՒՆՔ ՀԱՄԱՎԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՐԱԴ.		2½
13.	ALPHABET FRANÇAIS		2
14.	ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ ԿՐՈՆԻ ՈՒՍՄԱՆ		2
15.	ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ԱՅԲԵՆԱՐԱՆ		½
= 100 ր 25 Դահ			
16.	ՑԱՅՑԱԿԻ ԴԱԿԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ		2
17.	<u>Ճայլաբար</u>		4
18.	<u>Դայլաբար</u>		5

ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴՐՈՅՑԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵՒՅՑ

Հասցէ. Միքատ Դաւթեան

Դավասկեր խան, Պահակ Դարու, Կ. Պոլիս